HETQ.am-ի լրագրող Տիրայր Մուրադյանին

Հարգելի պարոն Մուրադյան

Ի պատասխան Ձեր 2024 թվականի դեկտեմբերի 18-ի հարցման՝ HETQ.am լրատվական կայքում և կայքի ֆեյսբուքյան էջում 2024 թվականի դեկտեմբերի 19-ին հրապարակված՝ «Կեղծիքներ՝ հանուն Գագիկ Ծառուկյանի. Հրդեհի դեպքում մարդկանց տարհանումը ռիսկային է» վերտառությամբ Ձեր հոդվածի առնչությամբ հարկ եմ համարում ներկայացնել հետևյալ դիտարկումները.

ափսոսում եմ, որ ավելի վաղ տեղեկացված չլինելով հոդվածի նախապատրաստման մասին՝ հնարավորություն չեմ ունեցել ի սկզբանե պարզաբանել իմ անձի շուրջ հոդվածում նշած չճշտված, սխալ տեղեկատվությունը:

Փաստացի հարցումն ստացել եմ հոդվածի հրապարակման նախորդ օրը, այն դեպքում, երբ ներկայումս չեմ աշխատում Քաղաքաշինության կոմիտեում և օբյեկտիվորեն չէի կարող անմիջապես արձագանքել՝ տեղեկատվությանը հասանելիություն չունենալու պատճառով:

Քաղաքաշինության կոմիտեի նախագահը, ինչպես պետական կառավարման համակարգի ցանկացած մարմնի ղեկավար, հանդես է գալիս և փաստաթղթեր ստորագրում ոչ թե իր, այլ տվյալ մարմնի անունից: Իսկ նյութերը նախապատրաստում են մասնագիտական ստորաբաժանումները՝ փաստաթղթերի ուսումնասիրությունների, վերլուծությունների, իսկ որոշ դեպքերում՝ միջգերատեսչական տեղեկատվության վրա, հիմնվելով գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների, սահմանված ընթացակարգերի վրա: Առավել ևս փաստաթղթերը շրջանառվում և համաձայնեցվում են համակարգող տեղակալի, գլխավոր քարտուղարի, այլ մասնագիտական և աջակցող ստորաբաժանումների հետ:

Ուստի Կոմիտեի գործունեությանն առնչվող գրությունները ղեկավարի անձին վերագրելը առնվազն օբյեկտիվ չէ և առանց պարզաբանումներ ստանալու գրությամբ ներկայացված տեղեկությունները «կեղծ» որակելը մեղմ ասած անհիմն է:

Հետևաբար, որևէ հարցի առնչությամբ պարզաբանումներ ստանալու անհրաժեշտության դեպքում դրանք կարող է տրամադրել Քաղաքաշինության կոմիտեն՝ տվյալ գրությունը նախապատրաստած ստորաբաժանման միջոցով:

Անդրադառնալով հոդվածի՝ Քաղաքաշինության կոմիտեի և իմ անձին վերաբերող հատվածին, Ձեր կողմից տրամադրված նյութերի ուսումնասիրության արդյունքում հարկ եմ համարում պարզաբանել հետևյալը.

2019թ. տրամադրված նախագծման թույլտվության 9.3 կետում նշվում է 12 հարկի և գլանաձև ծավալի համար հարակից շենքերի հետ համահունչ ընկալման պայմանի մասին, չնշելով հարկայնությունը՝ այն թողնելով նախագծողների մշակումներին, որտեղ և ներկայացվել են 12 և 18 հարկեր՝ հիմնական և գլանաձև ծավալների մասով:

Վստահ եմ, որ հենց այդ հանգամանքն է թյուրիմացության տեղիք տվել, որի վրա կառուցվել է Ձեր այն ենթադրությունը, որ աշտարակը պետք է լիներ 12 հարկ, այնինչ դա վերաբերում է նախագծով ներկայացված լուծումների թիկունքային (հիմնական) հատվածին:

Նախագիծը համապատասխան պարզ փորձաքննությունից հետո ներկայացվել է Քաղաքաշինության կոմիտե՝ համալիր փորձաքննության:

Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն փաստի վրա, որ փորձաքննության ներկայացված նախագծային փաթեթում հիմնական մասնաշենքը նախագծվել է 12, իսկ ետ ընկած գլանաձև ծավալը՝ 18 հարկով:

Օրենսդրությամբ սահմանված կարգով անցնելով համաձայնեցման փուլերը՝ 2021 թվականի մայիսի 17-ին նախագծին տրվել է համալիր փորձաքննության թիվ 31/5 դրական եզրակացությունը:

Կառուցապատողը 2022թ. նամակով դիմել է Քաղաքաշինության կոմիտե՝ նշելով Երևանի քաղաքապետարանի ձգձգումների մասին, շինարարության օրիկանացման համար քաղաքապետի որոշման և նոր նախագծման թույլտվության առկայության մասին:

Նախագծման 2022թ. նոր թույլտվության 9.3 կետով նշված է հիմնական ծավալը մինչև 48.0մ և ետ ընկած գլանաձև հատվածը՝ մինչև 71մ բարձրությամբ:

Նամակում նշվում է, որ նախագծման թույտվության նոր տարբերակում շենքերի առավելագույն բարձրությունները հարկերի փոխարեն նշված են բարձրության առավելագույն նիշերով:

Ձեր ուշադրությունն եմ հրավիրում նաև այն փաստի վրա, որ Կառուցապատողը հիշատակված նամակում նշում է, որ նախագծում որևէ այլ փոփոխություններ չեն կատարվել և փորձաքննություն անցած նախագիծն ամբողջությամբ համապատասխանում է նոր տրամադրված նախագծման թույլտվության չափորոշիչներին:

Հարկ է շեշտադրել նաև, որ նամակով կառուցապատողի կողմից համալիր փորձաքննության նպատակով նոր նախագծային փաթեթ Քաղաքաշինության կոմիտե չի ներկայացվել, այլ պարզաբանում է հայցվել նախկինում ստացված փորձաքննության դրական եզրակացությունը վերահաստատելու մասին:

Դրանից ելնելով, Քաղաքաշինության կոմիտեի 07.04.2022թ. գրությամբ նշվել է, որ եթե նախագծում փոփոխություններ տեղի չեն ունեցել և նախագիծը համապատասխանում է նոր տրամադրված նախագծման թույլտվությանն, ապա կրկնակի համալիր փորձաքննության անհրաժեշտություն չկա և տրամադրված թիվ 31/5 դրական եզրակացությունը համարվում է ուժի մեջ:

Այսինքն, վերը նշվածից հետևում է, որ դրական եզրակացությունը վերաբերում է դրա հիմքում դրված նախագծին և ուժի մեջ է միայն այն դեպքում և այն պատճառով, որ Կառուցապատողի նամակի համաձայն՝ դրանում փոփոխություններ առկա չեն:

Հարկ եմ համարում նշել, որ շինթույլտվության տրամադրումն օրենքով վերապահված է համայնքին և այդ փաստաթղթի տրամադրումը մեխանիկական գործընթաց չէ: Ավելին, համալիր փորձաքննության դրական եզրակացությունը որևէ կերպ չի պարտադրում համայնքին՝ ինքնաշխատ տրամադրել շինարարության թույլտվություն և այն տրամադրող

համայնքի պարտականությունն է իր կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով համոզվել իր կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի (նախագծման թույլտվություն) և ներկայացված նախագծային փաթեթի համապատասխանության մեջ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ակնառու է, որ Կոմիտեի 07.09.2022թ. N06/11.1/6870-2022 գրությունը որևէ կեղծ տեղեկություն չի պարունակում:

Հիմք ընդունելով վերը նշված պարզաբանումները՝ խնդրում եմ նյութի հեղինակին և կայքի խմբագրությանը.

Նյութում անդրադառնալ վերը նշված պարզաբանմանը,

Նյութի բովանդակությունից հանել Քաղաքաշինության կոմիտեի գրությանն առնչվող «կեղծ տեղեկությունը պարունակող» որակումը,

Նյութի հոդվածից և գլխավոր նկարից հեռացնել իմ նկարը,

Նշված պարզաբանումները հրապարակել և տրամադրել այն լրատվամիջոցներին, որոնց տրամադրվել կամ որոնցում հրապարակվել է հոդվածը:

Հարգանքով՝
Արմեն Ղուլարյան